ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ.

Հաստատված է ՀՀ կրթության տեսչական մարմնի
ղեկավարի «01» փետրվարի 2022թ. N 2-Լ հրամանով

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ (ԿՏՄ) 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվության բովանդակությունը		Էջը
1.	*ԿՏՄ որակի ապահովման ստորաբաժանման կողմից յուրաքանչյուր եռամսյակ կառավարման խորհրդի հաստատմանը ներկայացված ԿՏՄ գործունեության կատարողականի գնահատման արդյունքների հիման վրա կազմված ամփոփ տեղեկատվություն*	2
2.	*ԿՏՄ գործունեության 2021 թվականի ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն*	7
3.	*ԿՏՄ 2021 թվականի գործունեության ծրագրով սահմանված թիրախներ, արդյունքների վերլուծություն*	9
4.	*Հաշվետու ժամանակահատվածում իրականացված իրազեկման միջոցառումներ*	19
5.	*Հաշվետու ժամանակահատվածում իրականացված խորհրդատվական գործունեություն*	20
6.	*Հաշվետու ժամանակահատվածում իրականացված կանխարգելիչ միջոցառումներ*	21
7.	*<u>Իրականացված ստուգումներ</u>* *7.1. Հաշվետու տարվա ընթացքում իրականացված ստուգումների քանակը (բացարձակ և տոկոսային արժեքներով)* *7.2. Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների քանակը (բացարձակ և տոկոսային արժեքներով)* *7.3. Ընդհանուր ստուգումների մեջ ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների քանակը (բացարձակ և տոկոսային արժեքներով)* *7.4. Տեղեկատվություն 1 ստուգման (պլանային և ոչ պլանային) ժամանակ ծախսված ֆինանսական և մարդկային ռեսուրսների քանակի, ինչպես նաև 1 ստուգման միջին տևողության վերաբերյալ* *7.5. Ստուգումների արդյունքները* *7.6. Վարչական վարույթների քանակը, դրանց հարուցելու հիմքերը* *7.7. Տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կրկնվող օրենսդրության խախտումները, ինչպես նաև դրանց պատճառները, տարածվածությունը* *7.8. Տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցներ*	 22 22 22 22 23 34 35 37
8.	*ԿՏՄ վերահսկողության ոլորտում ռիսկերի առկա իրավիճակի վերլուծություն*	38
9.	*Օրենսդրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին առաջարկներ (բովանդակությունը, նպատակը)*	42

10.	***Տեսչական մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի դեմ բերված բողոքների քանակը, բովանդակությունը և դրանց վերաբերյալ ընդունված որոշումները, տեղեկատվություն դատարանների կողմից վարույթ ընդունված գործերի մասին***	**45**

ՀՀ կրթության տեսչական մարմնի 2021 թվականի գործունեությունը

ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ նաև ԿՏՄ կամ տեսչական մարմին) հաշվետվությունը կազմվել է՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը:

ԿՏՄ-ն գործում է ՀՀ Սահմանադրության, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի, այլ օրենքների, իրավական այլ ակտերի և իր կանոնադրության հիման վրա: ԿՏՄ կառավարման խորհրդի 19.12.2020թ. N 11 որոշմամբ հաստատված ԿՏՄ գործունեության 2021 թվականի ծրագրով նախատեսված գործառույթների շրջանակներում 2021 թվականի ընթացքում իրականացվել են ստորև նշված աշխատանքները.

1. ԿՏՄ որակի ապահովման ստորաբաժանման կողմից յուրաքանչյուր եռամսյակ կառավարման խորհրդի հաստատմանը ներկայացված ԿՏՄ գործունեության կատարողականի գնահատման արդյունքների հիման վրա կազմված ամփոփ տեղեկատվություն

Տեսչական մարմնի կատարողականի գնահատումը կատարվել է՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-254-Ն օրենքի 11-րդ հոդվածի պահանջների և Հայաստանի Հանրապետության 2015 թվականի հունիսի 25-ի «Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին» N 693-Ն որոշման հիման վրա կազմված կատարողականի գնահատման մեթոդոլոգիան:

Տեսչական մարմնի կատարողականի գնահատման չափորոշիչներն են՝

1. նպատակի չափորոշիչներ.
2. գործընթացի չափորոշիչներ.
3. արդյունքի չափորոշիչներ:

1. Նպատակի չափորոշիչներ

1.1) Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը գնահատելու համար յուրաքանչյուր ոլորտի համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռը:

Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակի գնահատումը կատարվում է հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարի և վերահսկողության ընթացքում նախատեսված ստուգաթերթերի ընդհանուր կշիռների հանրագումարի հարաբերությամբ:

2021 թվականին տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը 0,1 է: Նույն ցուցանիշն, ըստ ոլորտների, հետևյալն է՝

նախադպրոցական կրթության ոլորտ՝ 0,15.

հանրակրթության ոլորտ՝ 0,06.

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ՝ 0,05:

1.2) Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը գնահատելու համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում տեսչական մարմնի կողմից ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռը:

Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը գնահատվում է հաշվետու ժամանակահատվածում ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարի և վերահսկողության ընթացքում նախատեսված ստուգաթերթերի ընդհանուր կշիռների հանրագումարի հարաբերությամբ:

2021 թվականին տեսչական մարմնի ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը 0,05 է: Նույն ցուցանիշն, ըստ ոլորտների, հետևյալն է՝

նախադպրոցական կրթության ոլորտ՝ 0,06.

հանրակրթության ոլորտ՝ 0,05.

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ՝ 0,02:

1.3) Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները

2021 թվականին ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար ֆինանսական միջոցներ չեն հատկացվել, իսկ մարդկային ռեսուրսները միջինում կազմել է 5,5 աշխատակից:

1.4) Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները

2021 թվականին տեսչական մարմնի կողմից իրականացված խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացվել են 199800 ՀՀ դրամ ֆինանսական միջոցներ, և մասնակցել է 57 աշխատակից (բոլոր միջոցառումներին մասնակցած աշխատակիցների թիվը): Նույն ցուցանիշն, ըստ ոլորտների, հետևյալն է՝

նախադպրոցական կրթության ոլորտ՝ 66800 ՀՀ դրամ և 26 աշխատակից .

հանրակրթության ոլորտ՝ 133000 ՀՀ դրամ և 18 աշխատակից.

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ՝ 0 ՀՀ դրամ և 13 աշխատակից:

1.5) Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկների քանակը

2021 թվականին տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացրել է 98 առաջարկ: Նույն ցուցանիշն, ըստ ոլորտների, հետևյալն է՝

նախադպրոցական կրթության ոլորտ՝ 9 առաջարկ.

հանրակրթության ոլորտ՝ 79 առաջարկ.

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ՝ 10 առաջարկ:

2. Գործընթացի չափորոշիչներ

Գործընթացի չափորոշիչները վերաբերում են տեսչական մարմնի գործառույթների իրականացման ընթացքին:

2.1) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը գնահատելու համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում տարեկան ծրագրով չնախատեսված, սակայն տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների միջին տևողությունը:

2021 թվականին տեսչական մարմնի կողմից ըստ անհրաժեշտության իրականացրած ստուգումների միջին տևողությունը 3,04 օր է: Նույն ցուցանիշն, ըստ ոլորտների, հետևյալն է՝

նախադպրոցական կրթության ոլորտ՝ 0 օր.

հանրակրթության ոլորտ՝ 3,12 օր.

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ՝ 2,8 օր:

2.2) Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ չափորոշչի գնահատման համար վերլուծվել է բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում հաշվետու ժամանակահատվածում կատարված ստուգումների քանակի և տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրում նույն ժամանակահատվածում ընդգրկված և իրականացված ստուգումների քանակի հարաբերությունը:

2021 թվականին բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ 0,68 է: Նույն ցուցանիշն, ըստ ոլորտների, հետևյալն է՝

նախադպրոցական կրթության ոլորտ՝ 0,49.

հանրակրթության ոլորտ՝ 0,8.

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ՝ 0,71:

2.3) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը հաշվարկվել է ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների ընդհանուր տևողության և դրանց քանակի հարաբերությամբ:

2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների միջին տևողությունը կազմել է 4.3 օր: Նույն ցուցանիշն, ըստ ոլորտների, հետևյալն է՝

նախադպրոցական կրթության ոլորտ՝ 2,9 օր.

հանրակրթության ոլորտ՝ 5.2 օր.

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ՝ 5 օր:

2.4) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունը ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակին[1]:

2021 թվականին տեսչական մարմնի կողմից ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակը (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) 0 է:

2.5) Ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, ընթացակարգերի թափանցիկությունից, տեղեկատվության որակից և տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից

Չափորոշչի գնահատումը կատարվել է հիմք ընդունելով չափորոշչում նշված հարցերի վերաբերյալ ստացված դիմում-բողոքները:

2021 թվականի ընթացքում նշված հարցերի վերաբերյալ տեսչական մարմնի դեմ բերվել է 1 դիմում-բողոք: Վարչական վարույթի մասնակիցների հետ կայացած քննարկման արդյունքում դիմումատուն գրավոր խնդրել է իր դիմումը թողնել անհետևանք, այդ թվում՝ տեսչական մարմնի աշխատակցի նկատմամբ հայտնած դժգոհությունը:

3. Արդյունքի չափորոշիչներ

Արդյունքի չափորոշիչները վերաբերում են տեսչական մարմնի կոնկրետ լիազորության իրականացման անմիջական արդյունքին:

3.1) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերությունը

---

[1] Այն ստուգումները, որոնց դեպքում կիրառված ստուգաթերթերի կիրառված կետերի «ոչ» պատասխանների թիվը 80 և ավելի տոկոս է:

2021 թվականին ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերությունը 5,22 է: Նույն ցուցանիշն, ըստ ոլորտների, հետևյալն է՝

նախադպրոցական կրթության ոլորտ՝ 43/0.

հանրակրթության ոլորտ՝ 2,88.

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ՝ 4,67:

3.2) Տեսչական մարմնի վերահսկման բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխությունը (Աղյուսակ 1)

Աղյուսակ 1

ՈԼՈՐՏՆԵՐ		2020 թվական			2021 թվական		
		Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում ստուգումների թիվը	Հայտնա-բերված խախտումներ կշիռների հանրա-գումարը	Հայտնա-բերված խախտում ների միջինաց-ված ցուցա-նիշները	Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում ստուգումների թիվը	Հայտնա-բերված խախտումներ կշիռների հանրա-գումարը	Հայտնա-բերված խախտումների միջինաց-ված ցուցանիշ-ները
1.	Նախադպրոցական կրթության ոլորտ	16	216	13,5	21	433	20,6
2.	Հանրակրթության ոլորտ	25	124,7	4,99	41	166,2	4,05
3.	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ	12	57,1	4,76	20	58,3	2,91

3.3) Ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները հաշվարկվում են հաշվետու ժամանակահատվածում ստուգման համար հատկացված ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների միջին ցուցանիշներով:

2021 թվականին իրականացված ստուգումներին միջինում հատկացվել է 77974 ՀՀ դրամ, և միջինում 1 ստուգմանը մասնակցել է 1,46 աշխատակից: Նույն ցուցանիշն, ըստ ոլորտների, հետևյալն է՝

նախադպրոցական կրթության ոլորտ՝ 25463 ՀՀ դրամ և 1,03 աշխատակից.

հանրակրթության ոլորտ՝ 128311 ՀՀ դրամ և 1,87 աշխատակից.

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ՝ 46672 ՀՀ դրամ և 1,19 աշխատակից:

3.4) Տեսչական մարմնի, տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները:

2021 թվականի ընթացքում տեսչական մարմնի, տեսչական մարմնի աշխատակիցների բերվել է 1 դիմում-բողոք, որը կարճվել է՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը:

2. ԿՏՄ գործունեության 2021 թվականի տարեկան ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն

ԿՏՄ-ն իր գործունեությունն իրականացրել է՝ հիմք ընդունելով ԿՏՄ կառավարման խորհրդի 19.12.2020թ. N 11 որոշմամբ հաստատված 2021 թվականի տարեկան գործունեության ծրագիրը:

ԿՏՄ գործունեության 2021 թվականի ծրագրի նպատակն էր՝ **արդյունավետ վերահսկողության միջոցով վեր հանել հանրակրթության և նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում կրթության կազմակերպման, ինչպես նաև ուսուցման և ուսումնառության վրա 2020 թվականի հասցրած անմիջական (կարճաժամկետ) վնասները, նախանշել դրանց հաղթահարման ուղիները:**

Առանձնացվել էին ծրագրի նպատակից բխող խնդիրներն ըստ ոլորտների:

Նախադպրոցական կրթության ոլորտ

✓ Անվտանգ և հասանելի կրթադաստիարակչական միջավայրի ապահովում:

Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտ

✓ Կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետություն և դիմակայունության ապահովում:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ

✓ Կրթական գործընթացի կառավարման և կազմակերպման արդյունավետության ապահովում:

Վերոնշյալ խնդիրների իրագործման նպատակով իրականացվել են գործողություններ հետևյալ 2 հիմնական ուղղություններով՝

1. Կանխարգելիչ, իրազեկման, խորհրդատվական միջոցառումներ.

2. Վերահսկողական գործառույթներ (ստուգումներ, ուսումնասիրություններ, վարչական վարույթներ, ստուգայցեր):

Համաձայն 2021 թվականի ստուգումների ժամանակացույցի ԿՏՄ-ն ստուգումներ պետք է իրականացներ ՀՀ 113 ուսումնական հաստատություններում (40 նախադպրոցական ուսումնական հաստատություններ (մանկապարտեզներ), 45 հանրակրթական ուսումնական հաստատություններ (դպրոցներ), 28 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ (ուսումնարաններ և քոլեջներ)): Տարվա ընթացքում ԿՏՄ հանրակրթության վարչության համակազմը մրցութային կարգով համալրվեց 3 ծառայողով, որի հիման վրա ստուգումների ծրագրում կատարվեց լրացում. ստուգվող մանկապարտեզների թիվն ավելացվեց 5-ով, իսկ դպրոցներինը՝ 4-ով:

ԿՏՄ 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Զանգակ» և ՀՀ Տավուշի մարզի Բագրատաշեն համայնքի մանկապարտեզներում ստուգումներ չեն իրականացվել: ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավարից ստացված գրության համաձայն՝ մանկապարտեզը չէր գործելու մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ը՝ հիմնանորոգման պատճառով, իսկ ՀՀ Տավուշի մարզպետից և Բագրատաշեն համայնքի ղեկավարից ստացված գրությունների համաձայն՝ Բագրատաշեն համայնքի մանկապարտեզը չէր գործելու մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը՝ համավարակի պատճառով: Այսպիսով, ըստ ստուգումների տարեկան ծրագրի՝ ԿՏՄ-ն ստուգումներ է իրականացրել 43 մանկապարտեզներում, 49 դպրոցներում, 28 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Նախադպրոցական կրթության ոլորտում իրականացված 18 ստուգումների շրջանակում գնահատվել են մանկապարտեզների կրթության կազմակերպման անվտանգությունը և մատչելիությունը՝ COVID-19-ի առկայության պայմաններում:

Հանրակրթության ոլորտում իրականացված ստուգումների շրջանակում՝ VI, IX և XI դասարանների սովորողների «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկայից նախորդ երկու ուսումնական տարիների մնացորդային գիտելիքների ստուգման նպատակով տրվել են գրավոր աշխատանքներ: Միաժամանակ, 15 դպրոցներում իրականացված ստուգումների շրջանակում դպրոցների կրթական գործընթացը գնահատվել է համաձայն կրթության որակի գնահատման ձևաթղթի:

Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ոլորտներում իրականացված 7 ստուգումների շրջանակում (ըստ նախապես ընտրված մասնագիտությունների) գնահատվել է կրթական գործընթացի որակը՝ համաձայն կրթության որակի գնահատման ձևաթղթի:

2021 թվականին ԿՏՄ-ում ստացվել է 60 դիմում-բողոք 49 ուսումնական հաստատությունների գործունեության վերաբերյալ:

ԿՏՄ ծառայողների կողմից իրականացվել են կանխարգելիչ, աջակցման, խորհրդատվական 26 հեռավար և 2 առկա միջոցառումներ՝ ՀՀ 101 նախադպրոցական, 71 հանրակրթական, 51 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների, 2 իրազեկում-հանդիպում՝ 19 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողական խորհուրդների անդամների, 5 առցանց հանդիպում-խորհրդատվություն քաղաքապետարանի ենթակայության դպրոցների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների շուրջ 200 անդամների մասնակցությամբ:

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Երևան քաղաքի տարածքային կենտրոնի և ԿՏՄ աշխատակիցների կողմից համատեղ 319 և 348 ստուգայցեր են իրականացվել համապատասխանաբար Երևան քաղաքի 167 դպրոցներ և 153 մանկապարտեզներ:

ԿՏՄ 2021 թվականի գործունեության ծրագրի համաձայն՝ ՀՀ ուսումնական հաստատությունների՝ Արցախից տեղափոխված սովորողների կրթության իրավունքի իրացման նկատմամբ իրականացվել է վերահսկողություն՝ կրթական նոր միջավայրում նրանց ինտեգրմանը,

հոգեբանական ներգրավմանը աջակցելու նպատակով: Իրականացվել են այդ սովորողների կրթական կարիքների վերաբերյալ հարցումներ, ուսումնասիրվել են նրանց շարժը, բովանդակային ստուգումների ընթացքում տրված գրավոր աշխատանքների արդյունքները:

Ըստ անհրաժեշտության, ուսուցիչների օգնությամբ լրացուցիչ ուսուցում ապահովելու նպատակով, առանձնացվել են արցախցի սովորողների գրավոր աշխատանքները: Գրավոր աշխատանքների արդյունքում «Անբավարար» գնահատված 11 դպրոցների 17 սովորողների վերաբերյալ գրություններ են ուղարկվել ՀՀ ԿԳՄՍ նախարարին, Երևանի քաղաքապետին, ՀՀ Արմավիրի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի մարզպետներին՝ այդ սովորողների ուսման որակը բարելավելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու առաջարկով:

3. ԿՏՄ 2021 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված թիրախներ, արդյունքների վերլուծություն

2021 թվականին ստուգումների տարեկան ծրագրում ներառված ուսումնական հաստատություններում ստուգումներն իրականացվել են նոր ձևաչափով. ԿՏՄ կողմից վերահսկվող ոլորտներում առկա խնդիրների բազմաշերտ ախտորոշման նպատակով կիրառվել են առկա բոլոր ստուգաթերթերը: Տեսչական մարմնի ստուգում իրականացնող ստորաբաժանումների մարդկային ռեսուրսների և համապատասխան ոլորտների ուսումնական հաստատությունների ոչ համաչափ համամասնության պատճառով (հնարավոր չէ բոլոր ստուգաթերթերը կիրառել ոլորտի բոլոր հաստատություններում) ստուգաթերթերը բաժանվել են առանձին բովանդակային փաթեթների՝ ըստ սահմանված թիրախների: Փաթեթներում առկա են բազային (բոլոր փաթեթներում կիրառվող) 1 կամ 2 ստուգաթերթեր: Հանրակրթության ոլորտի 4 փաթեթներում ներառված են 6 կամ 7, նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտների 3 փաթեթներում՝ 4-ական ստուգաթերթեր: Բոլոր փաթեթներում գործածվող ստուգաթերթերը միասին ծածկում են համապատասխան ոլորտում կիրառվող ստուգաթերթերի ողջ տիրույթը:

Բազային ստուգաթերթերը վերաբերել են ուսումնական հաստատությունում տնօրենին և կրթության կազմակերպմանը ներկայացվող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարմանն ուղղված ստուգումներին: Նշված ստուգաթերթերը որպես բազային ընտրվել են ոչ միայն այն պատճառով, որ ուսումնական հաստատությունում կրթության որակի անմիջական պատասխանատուն տնօրենն է, այլև՝ կրթության որակի վրա անմիջական ազդեցություն ունեցող, կրթական գործընթացի կազմակերպմանը վերաբերող կարգավորումները ներառված են այս ստուգաթերթերում (ուսումնական պլան, լիցենզիա և այլն):

Տեսչական մարմնի 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված այն հաստատություններում, որտեղ արդեն իսկ տեսչական մարմնի կողմից ստուգումներ իրականացվել են, ստուգաթերթերի փաթեթի ընտրությունը կատարվել է նախորդ ստուգման ընթացքում ռիսկայնության ամենամեծ կշռային միավոր ունեցող ստուգաթերթով: Եթե դա

համընկել է բազային ստուգաթերթի հետ, ապա ընտրվել է հաջորդ ամենամեծ կշռային միավոր ունեցող ստուգաթերթը:

2021 թվականի տարեկան գործունեության ծրագրի համաձայն՝ **Նախադպրոցական կրթության ոլորտում** անվտանգ և հասանելի կրթադաստիարակչական միջավայրի ապահովման նպատակով 43 մանկապարտեզներում ստուգումներ են իրականացվել ըստ բոլոր ստուգաթերթերի, ստուգման գործընթացին զուգահեռ՝ 18 մանկապարտեզներում գնահատվել են կրթության կազմակերպման անվտանգությունը և մատչելիությունը՝ COVID-19-ի առկայության պայմաններում: Առաջին կիսամյակում 14 մանկապարտեզներում իրականացված ստուգումների ընթացքում կիրառվել են Նախադպրոցական կրթության ոլորտի բոլոր 3 ստուգաթերթերը, իսկ մնացած 29 մանկապարտեզներում՝ ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 10-ի N948-Ն որոշմամբ հաստատված՝ լրամշակված 4 ստուգաթերթերը: Առանձին ստուգաթերթով ներկայացվել են մանկապարտեզում կրթության կազմակերպմանը ներկայացվող իրավական ակտերի պահանջներին վերաբերող հարցերը:

Ստուգված մանկապարտեզներում առավել ռիսկային է մեթոդիստին՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալին, մանկավարժական աշխատողներին ներկայացվող պահանջների կատարումը:

Ստուգված մանկապարտեզների կողմից միջինում խախտվել են Նախադպրոցական կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների 15%-ը (ըստ ստուգաթերթերի): 2021 թվականին Նախադպրոցական կրթության ոլորտում իրականացված ստուգումների արդյունքում ձևավորված ռիսկային միջին միավորը կազմել է՝ 21.9 , որը կիրառված ստուգաթեթերի կշռային միավորների հանրագումարի՝ 150-ի 15%-ն է:

Ըստ առանձին ուղղությունների՝ պատկերն այսպիսին է. 14 մանկապարտեզների կողմից միջինում խախտվել են՝

- տնօրենին ներկայացվող իրավական ակտերի պահանջների 13 %-ը,
- մեթոդիստին՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալին, մանկավարժական աշխատողներին ներկայացվող իրավական ակտերի պահանջների 16%-ը,
- զարգացնող միջավայրին ներկայացվող իրավական ակտերի պահանջների 0.6%-ը (Գծապատկեր N 1):



29 մանկապարտեզների դեպքում պատկերն այսպիսին է՝ միջինում խախտվել են՝

- տնօրենին ներկայացվող իրավական ակտերի պահանջների 17 %-ը,
- մեթոդիստին՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալին, մանկավարժական աշխատողներին ներկայացվող իրավական ակտերի պահանջների 21%-ը,
- զարգացնող միջավայրին ներկայացվող իրավական ակտերի պահանջների 3%-ը,
- կրթության կազմակերպմանը ներկայացվող իրավական պահանջների՝ 16%-ը (Գծապատկեր N 2):



Ինչպես ներկայացված է N 1 և N 2 գծապատկերներում՝ միջինացված ամենամեծ ռիկային միավորը ստացվել է մեթոդիստին՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալին, ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում: Ստուգումների արդյունքներն, ըստ ուսումնական հաստատությունների, ներկայացված են 2021 թվականի եռամսյակային հաշվետվություններում:

18 մանկապարտեզներում կրթության կազմակերպման անվտանգությունը և մատչելիությունը՝ COVID-19-ի առկայության պայմաններում գնահատվել է համաձայն «Անվտանգություն», «Մատչելիություն», «Ծնողի հարցաթերթ» հավելվածներից բաղկացած ձևաթղթի:

«Անվտանգություն» և «Մատչելիություն» հավելվածների գնահատման սանդղակն ունի 5 մակարդակ՝ «Գերազանց», «Շատ լավ», «Լավ», «Բավարար», «Անբավարար», իսկ «Ծնողի հարցաթերթ»-ը պարունակում է «Այո», «Ոչ», «Չի պահանջվում» պատասխանները:

«Անվտանգություն» հավելվածով գնահատված մանկապարտեզների 83%-ը (15 մանկապարտեզ) գնահատվել է «Գերազանց», 11%-ը (2 մանկապարտեզ)՝ «Շատ լավ», իսկ 6%-ը (1 մանկապարտեզ)՝ «Լավ»:

«Մատչելիություն» հավելվածով գնահատված մանկապարտեզների 11%-ը (2 մանկապարտեզ) գնահատվել է «Գերազանց», 28%-ը (5 մանկապարտեզ) գնահատվել է «Շատ լավ», իսկ 61%-ը (11 մանկապարտեզ)՝ «Լավ»:

«Ծնողի հարցաթերթ» հավելվածում գերակշռել են «Այո» պատասխանները, որոնք հավաստում են կորոնավիրուսային հիվանդության առկայության պայմաններում մանկապարտեզներում անհրաժեշտ կանոնների պահպանման մասին:

Գնահատման արդյունքները՝ համապատասխան առաջարկներով ուղարկվել են մանկապարտեզների տնօրեններին: Մանկապարտեզների գնահատման արդյունքների վերլուծություններում վեր հանված խնդիրները, հիմնականում վերաբերել են՝

- ուսումնական միջավայրի մասամբ համապատասխանությանը պետական կրթական չափորոշիչների պահանջներին,
- տարատարիք խմբերում իրականացվող կրթական ծրագրերի ոչ լիարժեք համապատասխանությանը չափորոշիչների պահանջներին,
- երեխաների ֆիզիկական, էկոլոգիական կուլտուրայի, գեղարվեստագիտական, թատերական և երաժշտական գործունեության, մարդու, պատմության, մշակույթի մասին երեխաների պատկերացումների զարգացման համար պայմանների մասնակի առկայությանը,
- մանկավարժական աշխատողների մասնագիտական պասիվությանը,
- COVID-19-ի առկայության պայմաններում, մասնավորապես՝ զանգվածային միջոցառումներ իրականացնելու, հաստատության շենքերին հարակից տարածքներում մարդկանց կուտակումների, հաստատություններում, ըստ անհրաժեշտության, օդափոխություն չիրականացնելու, սոցիալական հեռավորություն չպահպանելու դեպքերի առկայությանը:

Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտում կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության և դիմակայունության ապահովման նպատակով

ստուգումներ են իրականացվել 49 դպրոցներում, 15 դպրոցներում ստուգման գործընթացին զուգահեռ գնահատվել է կրթական գործընթացը՝ համաձայն կրթության որակի գնահատման ձևաթղթի:

Ստուգումներն իրականացվել են 3 ուղղություններով՝

- ✓ հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման, խորհրդակցական մարմինների (մանկավարժական խորհրդի, առարկայական մեթոդական միավորումների, ծնողական և աշակերտական խորհուրդների), վարչական աշխատողների գործունեության իրավաչափությունը (Փաթեթ N1՝ **NN 01, 03, 04, 06, 07, 14 ստուգաթերթեր**),
- ✓ դպրոցավարություն և կադրային քաղաքականություն (Փաթեթ N2՝ **NN 01, 02, 03, 04, 05, 08, 09 ստուգաթերթեր**),
- ✓ կրթական գործընթացի կազմակերպում (Փաթեթ N3՝ **NN 01, 02, 03, 04, 14, 15 ստուգաթերթեր**),
- ✓ սովորողների շարժ՝ ընդունելության, տեղափոխման, դասարանից դասարան փոխադրման (ներառյալ՝ էքստեռն կարգով), ավարտման գործընթացների նկատմաբ վերահսկողություն (Փաթեթ N4՝ **NN 01, 03, 10, 11, 12, 13 ստուգաթերթեր**):

Հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման, խորհրդակցական մարմինների (մանկավարժական խորհրդի, առարկայական մեթոդական միավորումների, ծնողական և աշակերտական խորհուրդների), վարչական աշխատողների գործունեության իրավաչափության նկատմամբ վերահսկողություն իրականացվել է 9 դպրոցներում, դպրոցավարության և կադրային քաղաքականության նկատմամբ՝ 14, կրթական գործընթացի կազմակերպման նկատմամբ՝ 14, սովորողների շարժի նկատմամբ՝ 12 դպրոցներում:

Դպրոցներում առավել ռիսկային է կրթական գործընթացի կազմակերպումը:

49 դպրոցներում իրականացված ստուգումների արդյունքում առկա է հետևյալ պատկերը (Աղյուսակ 2).

Աղյուսակ 2

Թիրախ (փաթեթ)	*Փաթեթի ռիսկային միավոր*	*Ստուգումների արդյունքում ձևավորված միջինացված ռիսկային միավոր (%)*
Դպրոցի կոլեգիալ կառավարման, խորհրդակցական մարմինների, վարչական աշխատողների գործունեության իրավաչափություն	***72.8***	***3.74 (5.14%)***
Դպրոցավարություն և կադրային քաղաքականություն	***76***	***4.16 (5.47%)***
Կրթական գործընթացի կազմակերպում	***55.8***	***3.91 (7%)***
Սովորողների շարժ	***70***	***3.45 (4.93%)***

Համաձայն Աղյուսակ 2-ի տվյալների՝ կրթական գործընթացի կազմակերպման նկատմամբ իրականացված ստուգումների արդյունքում դպրոցներում միջինում խախտվել են համապատասխան իրավական ակտերի պահանջների 7%-ը:

Ըստ ստուգումների արդյունքում ձևավորված կշռային միավորների միջինացված տվյալների ռիսկային են դպրոցավարությունը և կադրային քաղաքականությունը: Սակայն այս դեպքում դպրոցների կողմից միջինում խախտվել են համապատասխան իրավական ակտերի պահանջների 5.5%-ը:

Համեմատաբար ցածր ռիսկային է սովորողների շարժի գործընթացը: Այս դեպքում համեմատաբար ցածր են թե՛ ռիսկային միավորը՝ 3.45, թե՛ միջինում խախտված իրավական ակտերի պահանջների տեկոսային համամասնությունը կիրառվածի նկատմամբ՝ 4.9% (Գծապատկեր N 3):



Ստուգումների ընթացքում VI, IX և XI դասարանների սովորողներին տրվել են գրավոր աշխատանքներ «Մաթեմատիկա» (հանրահաշիվ, երկրաչափություն) առարկայից: Գրավոր աշխատանքների միջոցով ստուգվել են սովորողների նախորդ երկու ուսումնական տարիների մնացորդային գիտելիքները:

Գրավոր աշխատանքների միջին գնահատականը կազմել է 4.12 միավոր՝ 10 միավորային սանդղակում: Գրավոր աշխատանքին մասնակցած 2739 սովորողներից «Գերազանց» են գնահատվել 132-ը (4.8%), «Լավ»՝ 351-ը (12.8%), «Բավարար»՝ 961-ը (35.1%), «Անբավարար»՝ 1295-ը (47.3%)՝ Գծապատկեր N 4.



Համեմատելով ԿՏՄ կողմից տրված գրավոր աշխատանքի արդյունքները այդ սովորողների «Մաթեմատիկա» առարկայի նախորդ տարվա գրավոր աշխատանքների արդյունքների հետ՝ ստացել ենք հետևյալ պատկերը (Գծապատկեր N 5)՝



Արդյունքները խիստ հակասական են «Անբավարար» գնահատականների դեպքում: ԿՏՄ կողմից տրված գրավոր աշխատանքի դեպքում «Անբավարար» են գնահատվել գրավոր աշխատանքի մասնակիցների 47.3%-ը, իսկ նախորդ տարվա ամփոփ գրավոր աշխատանքից՝ 7.4%-ը:

ԿՏՄ կողմից 2021 թվականի առաջին կիսամյակում տրված գրավոր աշխատանքների տարբերակների առաջադրանքների կեսը (5 միավորը) վերաբերել են 2018-2019 ուսումնական

տարվա, կեսը՝ 2019-2020 ուսումնական տարվա գիտելիքներին, իսկ երկրորդ կիսամյակում տրված գրավոր աշխատանքների տարբերակների դեպքում համապատասխանաբար՝ 2019-2020 և 2020-2021 ուսումնական տարիների գիտելիքներին:

Համեմատական պատկերն ըստ ուստարիների ներկայացված է ստորև բերված դիագրամում (Գծապատկեր N 6).



Գծապատկեր N 6-ի տվյալների համաձայն՝ 2021 թվականի I կիսամյակում տրված գրավոր աշխատանքների դեպքում ավելի բարձր են 2018-2019 ուստարվա մնացորդային գիտելիքների գնահատման արդյունքները, իսկ II կիսամյակի դեպքում՝ 2019-2020 ուստարվա մնացորդային գիտելքների գնահատման արդյունքները:

2021 թվականին 15 դպրոցներում իրականացված ստուգումների շրջանակում դպրոցների կրթական գործընթացը գնահատվել է համաձայն կրթության որակի գնահատման ձևաթղթի: Ձևաթուղթը բաղկացած է «Կառավարման խորհուրդ», «Տնօրեն», «Ուսուցիչ», «Մաթեմատիկա», «Ուսումնական միջավայր», «Դիմակայունություն», «Կանոններ (COVID-19)» հավելվածներից: Կրթական գործընթացի գնահատման արդյունքների վերլուծությունները՝ կրթության որակի բարելավմանը միտված առաջարկներով՝ ուղարկվել են դպրոցների տնօրեններին և կառավարման խորհուրդների նախագահներին:

Գնահատման արդյունքների վերլուծություններում վեր հանված խնդիրները հիմնականում վերաբերել են՝ կառավարման խորհրդի՝ կրթության որակի բարձրացմանն ուղղված գործառույթներին, սովորողների, ուսուցիչների գնահաման արդյունքներին, ուսուցիչների մասնագիտական ակտիվությանը, ուսումնական միջավայրի թերհագեցվածությանը, դպրոցներում արտակարգ իրավիճակում կրթության շարունակականությունն ապահովող ուսումնական պլանների և ծրագրերի պարզեցված փաթեթների բացակայությանը և այլն:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտների 28 հաստատություններում կրթական գործընթացի կառավարման և կազմակերպման արդյունավետության նպատակով՝ ստուգումներ են իրականացվել 3 ուղղություններով՝

- ✓ կրթության կառավարում (Փաթեթ N 1՝ **NN 01,02,06,09 ստուգաթերթեր**),
- ✓ կրթական գործընթացի կազմակերպում (Փաթեթ N 2՝ **NN 02,03,05,07 ստուգաթերթեր**),
- ✓ սովորողների շարժ (Փաթեթ N 3՝ **NN 02,04,05,08**):

«Կրթության կառավարման» նկատմամբ վերահսկողություն իրականացվել է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ոլորտի 4 և միջին մասնագիտական կրթության ոլորտի 5 հաստատություններում:

«Կրթական գործընթացի կազմակերպման» նկատմամբ վերահսկողություն իրականացվել է համապատասխանաբար 3 և 7, իսկ ***«Սովորողների շարժի»*** նկատմամբ՝ միջին մասնագիտական կրթության ոլորտի 9 հաստատություններում: Ստուգումների արդյունքներն ըստ ուսումնական հաստատությունների ներկայացված են 2021 թվականի եռամսյակային հաշվետվություններում:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ոլորտի 7 հաստատություններում իրականացված ստուգումների արդյունքում ունենք հետևյալ պատկերը (Աղյուսակ 3)՝

Աղյուսակ 3

Թիրախ (փաթեթ) (ն/մ)	*Փաթեթի ռիսկային միավոր*	*Ստուգումների արդյունքում ձևավորված միջինացված ռիսկային միավոր (%)*
Կրթության կառավարում	***74***	***5.13 (6.93%)***
Կրթական գործընթացի կազմակերպում	***90***	***2.3 (2.6%)***

Միջին մասնագիտական կրթության ոլորտի 21 հաստատություններում իրականացված ստուգումների արդյունքում ունենք հետևյալ պատկերը (Աղյուսակ 4)՝

Աղյուսակ 4

Թիրախ (փաթեթ) (մ/մ)	*Փաթեթի ռիսկային միավոր*	*Ստուգումների արդյունքում ձևավորված միջինացված ռիսկային միավոր (%)*
Կրթության կառավարում	***74***	***1.8 (2.4%)***
Կրթական գործընթացի կազմակերպում	***90***	***2.21 (2.5%)***
Սովորողների շարժ	***91***	***2.9 (3.2%)***

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ոլորտում առավել ռիսկային է ***«Կրթության կառավարման»***, իսկ միջին մասնագիտական կրթության ոլորտում՝ ***«Սովորողների շարժի»*** գործընթացը: Նշված երկու ոլորտներում իրականացված ստուգումների

միջինացված արդյունքներն ըստ թիրախների ներկայացված են ստորև բերված դիագրամում (Գծապատկեր N 7)՝



Ինչպես ներկայացված է դիագրամում՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ոլորտում ***«Կրթության կառավարման»*** նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքում ձևավորված միջիանացված ռիսկային միավորը կազմել է 5.13, որը կազմում է փաթեթի ռիսկային միավորի՝ 74-ի՝ 6.93%-ը: Այս փաթեթով ստուգված հաստատությունների կողմից միջինում խախտվել են համապատասխան իրավական ակտերի պահանջների 6%-ը:

Միջին մասնագիտական կրթության ոլորտում ***«Սովորողների շարժի»*** նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքում ձևավորված միջիանացված ռիսկային միավորը կազմել է 2.9, որը կազմում է փաթեթի ռիսկային միավորի՝ 90-ի 3.2%-ը: Այս փաթեթով ստուգված հաստատությունների կողմից միջինում խախտվել են համապատասխան իրավական ակտերի պահանջների 3%-ը:

Միաժամանակ, 2021 թվականին նախնական և միջին մասնագիտական 7 հաստատություններում իրականացված ստուգումների շրջանակում նախապես ընտրված մասնագիտության կրթական գործընթացի որակը գնահատվել է համաձայն կրթության որակի գնահատման ձևաթղթի: Ձևաթուղթը բաղկացած է «Տնօրեն», «Ուսանողի հարցաթերթ», «Գործընկեր կազմակերպություններ (Գործատու)» հավելվածներից: Գնահատման արդյունքների վերլուծությունները՝ համապատասխան առաջարկներով ուղարկվել են հաստատությունների տնօրեններին:

Կրթության որակի գնահատման արդյունքների վերլուծության արդյունքում վեր հանված խնդիրները, որոնք կարող են ազդել նախնական և միջին մասնագիտական հաստատություններում մրցունակ մասնագետների պատրաստման որակի վրա, հիմնականում

վերաբերել են՝ ուսանողների գործնական կարողությունների ու հմտությունների կատարելագործմանը, կրթական ծրագրերում գործնական ժամերի ավելացմանը, պրակտիկաների արդյունավետության բարձրացմանը, ռեսուրսների համալրմանը, իրազեկվածության բարձրացմանը և այլն:

4. Հաշվետու ժամանակահատվածում իրականացված իրազեկման միջոցառումներ

Կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության վերաբերյալ իրազեկելու՝ հնարավոր խախտումները կանխելու, հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով ԿՏՄ 2021 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված բոլոր իրազեկման (նաև հեռավար) միջոցառումներն իրականացվել են:

Մասնավորապես.

➢ ***Նախադպրոցական կրթության ոլորտում***

ԿՏՄ աշխատակիցների կողմից՝ վերահսկողական գործընթացից առաջ իրավական, մասնագիտական և մեթոդական աջակցություն ապահովելու նպատակով՝ 9 հեռավար և 2 առկա իրազեկման միջոցառումներ են իրականացվել համապատասխանաբար ՀՀ 59 և 20 մանկապարտեզների տնօրենների մասնակցությամբ:

Մասնակիցների կողմից հնչեցված հարցերը վերաբերել են ստուգման և մանկավարժական աշխատողների վերապատրաստման գործընթացներին:

➢ ***Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտում*** օրենսդրության պահանջների պահպանման (իրավական ակտերի փոփոխություններ, սահմանված կարգով կիրառում, COVID-19, արցախցի սովորողների խնդիրներ և այլն) ապահովման, ստուգումների գործընթացին, ՀՀ կառավարության 04.10.2018թ. № 1139-Ն որոշմամբ հաստատված ստուգաթերթերի (հավելված 2) բովանդակությանը և կառուցվածքին ծանոթացնելու նպատակով՝ 7 հեռավար իրազեկման միջոցառումներ են իրականացվել ՀՀ 47 հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների մասնակցությամբ:

Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության և ԿՏՄ համագործակցությամբ իրականացվել են իրազեկման 5 առցանց հանդիպում-խորհրդատվություններ քաղաքապետարանի ենթակայության դպրոցների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների շուրջ 200 անդամների մասնակցությամբ: Միջոցառումների ընթացքում ներկայացվել են դպրոցների կառավարման խորհուրդների գործառույթները սահմանող իրավական կարգավորումները, պատասխանել մասնակիցների հարցերին:

Սովորողների և ծնողների իրավական, մասնագիտական, մեթոդական աջակցության ապահովման, իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացման նպատակով՝ **5** (առկա) իրազեկման միջոցառում է իրականացվել ՀՀ **5** հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների և ծնողների մասնակցությամբ:

➢ ***Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում*** իրավական, մասնագիտական աջակցության և ՀՀ-ում համավարակով

պայմանավորված կրթության կազմակերպման խնդիրների և դրանց վերացման, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների պատշաճ կիրառման ապահովման նպատակով իրազեկման 5 միջոցառում (հեռավար) է իրականացվել 38 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների մասնակցությամբ:

Միջոցառումների ընթացքում քննարկվել են ՆՄՄԿ ոլորտի վերահսկողական գործառույթների շրջանակի, ստուգաթերթերի, ստուգումների ընթացքում հաճախ հանդիպող խախտումների, համավարակի պատճառով առաջացած խնդիրների և դրանց լուծման վերաբերյալ հարցեր: Մասնակիցները իրազեկվել են նաև ՆՄՄԿ ոլորտի նոր ընդունված իրավական ակտերի մասին:

19 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողական խորհուրդների անդամների մասնակցությամբ իրականացվել են իրազեկման 2 հեռավար միջոցառումներ՝ իրավագիտակցության բարձրացման և ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով:

Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության կողմից իրականացվել են իրազեկման 5 հեռավար միջոցառումներ՝ համապատասխանաբար 24 դպրոցների, 22 մանկապարտեզների (3 միջոցառում), 13 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների մասնակցությամբ: Միջոցառումների ընթացքում անդրադարձ է արվել 2020, 2021 թվականներին (ըստ ոլորտներտների) իրականացված ստուգումների արդյունքում արձանագրված առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթներին (խնդիրներին), ներկայացվել են ռիսկերի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը, ռիսկայնությունը որոշող չափորոշիչների ընդհանուր նկարագիրը:

Իրազեկման գործընթացներին մասնակցել են նաև ԿՏՄ որակի ապահովման, հանրության հետ տարվող աշխատանքների բաժինների, իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության աշխատակիցները՝ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

Իրականացված միջոցառումների արդյունքները ներառվել են ԿՏՄ 2021 թվականի եռամսյակային հաշվետվություններում:

5. Հաշվետու ժամանակահատվածում իրականացված խորհրդատվական գործունեություն

Ստուգումների գործընթացին ծանոթացնելու (ստուգաթերթեր, համապատասխան փաստաթղթեր և այլն) նպատակով խորհրդատվական միջոցառումներ են իրականացվել՝

- ***Նախադպրոցական կրթության ոլորտում***

ԿՏՄ աշխատակիցների կողմից՝ վերահսկողական գործընթացից առաջ խորհրդատվական՝ 9 հեռավար և 2 առկա միջոցառումներ են իրականացվել համապատասխանաբար ՀՀ 59 և 20 մանկապարտեզների տնօրենների մասնակցությամբ:

➢ ***Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտում***

ԿՏՄ աշխատակիցների կողմից՝ վերահսկողական գործընթացից առաջ խորհրդատվական՝ 7 հեռավար իրազեկման միջոցառումներ են իրականացվել ՀՀ 47 հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների մասնակցությամբ:

➢ ***Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում***

➢ ԿՏՄ աշխատակիցների կողմից՝ 38 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների մասնակցությամբ իրականացվել է 5 խորհրդատվական միջոցառում (հեռավար):

Իրականացված միջոցառումների արդյունքները ներառվել են ԿՏՄ 2021 թվականի եռամսյակային հաշվետվություններում: Միջոցառումների ընթացքում քննարկվել են ԿՏՄ 2021 թվականի տարեկան գործունեության ծրագրով և ստուգումների ժամանակացույցով նախատեսված առաջիկա վերահսկողական գործընթացներին վերաբերող հարցեր:

6. Հաշվետու ժամանակահատվածում իրականացված կանխարգելիչ միջոցառումներ

Նախադպրոցական կրթության ոլորտում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարմանն ուղղված մեթոդական աջակցություն է ցուցաբերվել ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի և ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում: Գործառույթի արդյունքում կազմված տեղեկանքները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին, համապատասխան համայնքապետներին և մարզպետներին:

Հանրակրթության ոլորտում ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կատարմանն ուղղված մեթոդական աջակցություն է ցուցաբերվել ՀՀ Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում: Գործառույթի արդյունքում կազմված տեղեկանքը ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին և ՀՀ Արարատի մարզպետին:

Կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման (COVID-19) նպատակով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Երևան քաղաքի տարածքային կենտրոնի և ԿՏՄ աշխատակիցների կողմից իրականացվել է 667 համատեղ ստուգայց Երևան քաղաքի 167 դպրոցներ և 153 մանկապարտեզներ: 2 մանկապարտեզներում և 9 դպրոցներում արձանագրված խախտումների հետևանքները վերացնելու վերաբերյալ ուսումնական հաստատությունների տնօրեններին տրվել են հանձնարարականներ:

ԿՏՄ կողմից կանխարգելիչ միջոցառումներն իրականացվել են նաև իրազեկման և խորհրդատվական գործառույթների միջոցով: Այդ միջոցառումների արդյունքներն արդեն իսկ ներկայացվել են հաշվետվության 4-րդ և 5-րդ գլուխներում:

7. Իրականացված ստուգումներ

7.1.Հաշվետու տարվա ընթացքում իրականացված ստուգումների քանակը (բացարձակ և տոկոսային արժեքներով).

ԿՏՄ կողմից իրականացվել է 143 (99%) ստուգում՝ ՀՀ 43 մանկապարտեզներում, 66 դպրոցներում, 7 ուսումնարաններում և 24 քոլեջներում:

7.2. Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների քանակը (բացարձակ և տոկոսային արժեքներով).

Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված է 120 (83%) ստուգում:

Համաձայն ԿՏՄ 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրի՝ նախատեսված էր ստուգումներ իրականացնել 122 ուսումնական հաստատություններում (49 դպրոց, 45 մանկապարտեզ, 7 ուսումնարան, 21 քոլեջ): Ստուգումներ են իրականացվել 49 (100%) դպրոցներում, 43 (96%) մանկապարտեզներում, 7 (100%) ուսումնարաններում, 21 (100%) քոլեջներում:

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Զանգակ» և ՀՀ Տավուշի մարզի Բագրատաշեն համայնքի մանկապարտեզներում ստուգումներ չեն իրականացվել: Ըստ համայնքների ղեկավարներից ստացված գրությունների՝ մանկապարտեզներից առաջինը չէր գործելու մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ը՝ հիմնանորոգման պատճառով, իսկ երկրորդը՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը՝ համավարակի պատճառով:

7.3. Ընդհանուր ստուգումների մեջ ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների քանակը (բացարձակ և տոկոսային արժեքներով).

Ընդհանուր ստուգումների մեջ ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումները 23-ն են (17 դպրոց, 3 քոլեջ (քոլեջներում իրականցվել է 6 ստուգում, որոնցից 1-ում՝ նաև ըստ ստուգումների տարեկան ծրագրի)), որը կազմում է ստուգումների ընդհանուր թվի 15.8%-ը և իրականացված ստուգումների թվի 16.1%-ը: Ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումներն իրականացվել են ԿՏՄ-ում ստացված դիմումների, լիազոր մարմիններից ստացված գրությունների հիման վրա:

7.4. Մեկ ստուգման (պլանային և ոչ պլանային) ժամանակ ծախսված ֆինանսական և մարդկային ռեսուրսների քանակը և միջին տևողությունը

Մեկ ստուգման միջին տևողությունը կազմել է 4.2 աշխատանքային օր, ծախսը՝ 65801 ՀՀ դրամ, մարդկային ռեսուրսները՝ 1.3 մարդ: Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 4.4 աշխատանքային օր, ծախսը՝ 75978 ՀՀ դրամ, մարդկային ռեսուրսները՝ 1.4 մարդ:

Ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 3.2 աշխատանքային օր, ծախսը՝ 14917 ՀՀ դրամ, մարդկային ռեսուրսները՝ 1.2 մարդ:

7.5.Սպուգումների արդյունքները.

Նախադպրոցական կրթության ոլորտ

Նախադպրոցական կրթության ոլորտում անվտանգ և հասանելի կրթադաստիարակչական միջավայր ապահովելու նկատմամբ ՀՀ օրենքով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելու նպատակով՝ 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրի համաձայն ԿՏՄ-ն ստուգումներ է իրականացրել 43 մանկապարտեզներում: Ստուգումների արդյունքում արձանագրվել է կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների 403 խախտում, կազմվել է 43 ակտ: Խախտումներից 233-ի (58%) հետևանքների վերացման նպատակով ԿՏՄ ղեկավարի կողմից 43 հաստատությունների տնօրեններին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ: Հանձնարարականների 38%-ը (88-ը) վերաբերել է հաստիքային միավորներին (սահմանվածից պակաս հատկացված կամ չհատկացված), 20%-ը (46-ը)՝ կադրային նշանակումներին:

Կանոնադրությունների անհամապատասխանություններին վերաբերող 28 խախտումների վերաբերյալ հանձնարարականներ չեն տրվել, այլ գրավոր առաջարկություններ են ներկայացվել համայնքների ղեկավարներին: 142 խախտումների ժամկետնանց լինելու պատճառով, դրանց հետևանքների վերացման վերաբերյալ ևս հանձնարարականներ չեն տրվել:

Հանձնարարականների կատարման ժամկետը 2021 թվականին լրացել է 39 մանկապարտեզների դեպքում: Կատարողականների վերաբերյալ գրություններ չեն ստացվել 4 մանկապարտեզներից: 39 մանկապարտեզներին տրված 221 հանձնարարականներից կատարվել են 65-ը (29%), մասամբ են կատարվել 59-ը (27%), չեն կատարվել 78-ը (35%), տեղեկատվություն չի տրամադրվել 19 (9%) հանձնարարականների կատարման վերաբերյալ:

Կատարված 65 հանձնարարականներից 18-ը (28%) վերաբերել են համակազմի ձևավորմանը, 12-ը (18%)՝ հաստիքային միավորներին, 7-ը (11%)՝ կադրերի նշանակումներին, 28-ը այլ բնույթի (չափորոշչի պահանջներ, լիցենզիա, պաշտոնային պարտականություններ և այլն): Մասամբ կատարված 59 հանձնարարականներից 29-ը (49%) վերաբերել են հաստիքային միավորներին, 9-ը (15%)՝ լիցենզիաներին, 6-ը (10%)՝ կադրերի նշանակումներին, 15-ը՝ այլ բնույթի: Չկատարված հանձնարարականներից 20-ը (26%)՝ վերաբերել են կադրերի նշանակումներին, 14-ը (18%)՝ հաստիքային միավորներին, 12-ը (15%)՝ համակազմի ձևավորմանը, 10-ը (13%)՝ չափորոշիչների պահանջների կատարմանը, 22-ը՝ այլ բնույթի (Աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Հանձնարարականներ	Հանձնարարականների քանակական տվյալներ ըստ բնույթների			
Կատարված՝ 65	Համակազմ՝ 18	Հաստիքային միավոր՝ 12	Կադրերի նշանակումներ՝ 7	Այլ՝ 28

Մասամբ կատարված՝ 59	Հաստիքային միավոր՝ 29	Լիցենզիա՝ 9	Կադրերի նշանակումներ՝ 6	Այլ՝ 15
Չկատարված՝ 78	Կադրերի նշանակումներ՝ 20	Հաստիքային միավոր՝ 14	Համակազմի ձևավորում՝ 12	Այլ՝ 32

Ինչպես ներկայացված է Աղյուսակ 5-ում՝ հաստիքային միավորների տրամադրմանը վերաբերող հանձնարարականները՝ մասամբ կատարված և չկատարված հանձնարարականների թվում, գտնվում են առաջին եռյակում: Հանձնարարականների և մանկապարտեզներից ստացված կատարողականների համադրման արդյունքներն ըստ մանկապարտեզների, հանձնարարականների բնույթների՝ ներկայացվել են եռամսյակային հաշվետվություններում:

Ստուգումների արդյունքներն ուղարկվել են համապատասխան լիազոր մարմինների ղեկավարներին: Կրթության բնագավառում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումները բացառելու և ստուգումների արդյունքում վեր հանված խնդիրներին լուծում տալու նպատակով՝ ստուգումների արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունները ներկայացվել են նաև ՀՀ ԿԳՄՍ, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարներին: Ստուգումների արդյունքները ներկայացվել են ԿՏՄ գործունեության եռամսյակային հաշվետվություններում (տե՛ս http://www.eib.am/reports/):

2020 թվականի համեմատ 2021 թվականին բոլոր ուղղություններով առկա է խախտումներ թույլ տված մանկապարտեզների տոկոսային թվի աճ (Գծապատկեր N 8):



Ինպես ներկայացված է N8 գծապատկերում՝ ստուգումների արդյունքում ունենք հետևյալ պատկերը.

- տնօրենին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել բոլոր մանկապարտեզներում (նույնը՝ 2020, 2019 թվականներին):

- մեթոդիստին՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալին, մանկավարժական աշխատողներին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 36 (83%) մանկապարտեզներում: 2020 թվականին մանկավարժական աշխատողներին ներկայացվող պահանջների կատարման խախտումներ արձանագրվել են 15 (75%), 2019 թվականին՝ 11 (32%) մանկապարտեզներում:

- զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 10 (23%) մանկապարտեզներում: 2020 թվականին զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների խախտումներ արձանագրվել են 4 (20%), 2019 թվականին՝ 7 (21%) մանկապարտեզներում:

- կրթական գործընթացի կազմակերպմանը ուղղված ստուգումներ ԿՏՄ կողմից իրականացվել են միայն 2021 թվականին ստուգված 29 մանկապարտեզներում: Խախատումներ արձանագրվել են 28-ում (97%):

Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտ

2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրի համաձայն ԿՏՄ կողմից ստուգումներ են իրականացվել ՀՀ 49 դպրոցներում: Ստուգումների արդյունքում 45 (92%) դպրոցներում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների 461 խախտումներ, կազմվել է 45 ակտ: Խախտումներից 106-ի (23%) հետևանքների վերացման նպատակով ԿՏՄ ղեկավարի կողմից 39 դպրոցների տնօրեններին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ (Գծապատկեր N 9):



Հանձնարարականների 47%-ը՝ 50-ը՝ վերաբերել են կադրային նշանակումներին,

14%-ը՝ 15-ը՝ տնօրենի պաշտոնային պարտականություններին,

9%-ը՝ 10-ը՝ ուսումնական պլանին,

8%-ը՝ 8-ը՝ վարչական աշխատողների ուսումնական ծանրաբեռնվածությանը,

23-ը՝ այլ բնույթի (լիցենզիա, սովորողների համակազմի ձևավորմանը, պարտադիր փաստաթղթերի առկայությանը և այլն):

Հանձնարարականների կատարման ժամկետը 2021 թվականին լրացել է 38 դպրոցների դեպքում: Կատարողականի վերաբերյալ գրությունն չի ստացվել 1 դպրոցից:

38 դպրոցներին տրված 311 հանձնարարականներից կատարվել են 268-ը (86%),

մասամբ են կատարվել 35-ը (11%),

չեն կատարվել 4-ը (1%),

տեղեկատվություն չի տրամադրվել 4 (1%) հանձնարարականների կատարման վերաբերյալ:

Կատարված 268 հանձնարարականներից 221-ը (82%) վերաբերել են համակազմի ձևավորմանը,

12-ը (4.5%)՝ կադրերի նշանակումներին,

8-ը (3%)՝ վարչական աշխատողների ուսումնական ծանրաբեռնվածությանը,

6-ը (2.2%)՝ ուսումնական պլաններին,

21-ը՝ այլ բնույթի (ուսուցչի մրցույթի ընթացակարգ, լիցենզիա, պաշտոնային պարտականություններ և այլն):

Մասամբ կատարված 35 հանձնարարականներից 19-ը (54%) վերաբերել են կադրերի նշանակումներին,

4-ը (11%)՝ կանոնադրություններին,

3-ը (9%)՝ լիցենզիաներով սահմանված սահմանային թվերի համապատասխանեցումներին, 8-ը՝ այլ բնույթի (ուսուցչի մրցույթ, ներքին գնահատում և այլն):

Չկատարված 4 հանձնարարականներից 2-ը վերաբերել են կադրային նշանակումներին, 1-ական՝ լիցենզիայով սահմանված սովորողների սահմանային թվի համապատասխանեցմանը, ծնողական խորհրդի գործունեությանը:

Ստուգումների արդյունքներն ուղարկվել են համապատասխան լիազոր մարմինների ղեկավարներին: Ստուգումների արդյունքներն ըստ դպրոցների ներառվել են ԿՏՄ 2021 թվականի եռամսյակային հաշվետվություններում: Ստուգումների արդյունքում ունենք հետևյալ պատկերը.

- *դպրոցում կրթության կազմակերպման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 22 (45%) դպրոցում:* 2020 թվականին կրթության կազմակերպմանը վերաբերող խախտումներ են արձանագրվել *30(83%), 2019 թվականին՝ 15 (45%) դպրոցներում:*
- *ուսուցչի պարտականությունների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են 28 դպրոցներում, արդյունքում ՀՀ* օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել դպրոցներից 4-ում (14%): 2020 թվականին ուսուցչի պարտականությունների կատարմանն ուղղված ստուգումներ չեն իրականացվել, իսկ 2019 թվականին համապատասխան իրավական ակտերի պահանջները խախտվել են 10 (30%) դպրոցներում:
- *տնօրենին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են բոլոր դպրոցներում:* Ստուգումների արդյունքում համապատասխան իրավական ակտերի պահանջների խախտումներ արձանագրվել են 43 (88%) դպրոցներում: 2020 թվականին տնօրենին ներկայացվող պահանջները խախտվել են 35 (97%), 2019 թվականին՝ 33 (100%) դպրոցներում:
- *տնօրենի տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, դասղեկի/դասվարի պարտականությունների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են 37 դպրոցներում:* Ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 12 (32%) դպրոցներում: 2020 թվականին համապատասխան իրավական ակտերի պահանջները խախտվել են 11(31%), 2019 թվականին՝ 13 (39%) դպրոցներում:
- *մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկին և նկարագրերին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են 14 դպրոցներում:* Ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել դպրոցներից 2-ում (14%): 2020 թվականին մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկին և նկարագրերին ներկայացվող պահանջների կատարման նկատմամբ ստուգումներ չեն իրականացվել: 2019 թվականին այդ ստուգումների արդյունքում խախտումներ են արձանագրվել 1**4 (42%)** դպրոցներում:
- *կառավարման խորհրդի ձևավորմանն ու լիազորությունների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են 9 դպրոցներում*: Ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել դպրոցներից 8-ում (89%): 2020 թվականին կառավարման խորհրդի ձևավորմանն ու լիազորությունների կատարմանն ուղղված իրավական ակտերի պահանջները խախտվել են 27 (75%), 2019 թվականին՝ 21 (64%) դպրոցներում:

- *խորհրդակցական մարմիններին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են 9 դպրոցներում*: Ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 2 (22%) դպրոցներում: 2020 թվականին նույն ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են արձանագրվել 11 (31%), 2019 թվականին՝ 16 (48%) դպրոցներում:
- *ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են 14 դպրոցներում:* Ստուգումների արդյունքում նշված կարգի պահանջների խախտումներ են հայտնաբերվել 9 (64%) դպրոցներում: 2020 թվականին նույն ստուգումների արդյունքում խախտումներ են հայտնաբերվել՝ 24 (67%), 2019 թվականին՝ 25 (76%) դպրոցներում:
- *ուսուցչի ատեստավորմանը, ատեստավորման միջոցով որակավորում ստացած մանկավարժական աշխատողներին հավելավճար տալուն ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են 14 դպրոցներում*: Ստուգումների արդյունքում նշված կարգի պահանջների խախտումներ չեն հայտնաբերվել: 2020 և 2019 թվականներին ուսուցչի ատեստավորմանը, ատեստավորման միջոցով որակավորում ստացած մանկավարժական աշխատողներին հավելավճար տալուն ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ չեն իրականացվել:
- *դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են 12 դպրոցներում:* Ստուգումների արդյունքում պարզվել է, որ դպրոցների կողմից դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ չեն իրականացվել, հետևաբար նաև ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ չեն հայտնաբերվել:
- *սովորողի ուսումնական հաստատություն ընդգրկման, հաստատությունից սովորողի տեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ* իրականացվել են 12 դպրոցներում: Ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 4 (33%) դպրոցներում: 2020 թվականին իրականացված համապատասխան ստուգումների ընթացքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 20 (56%), 2019 թվականին՝ 20 (61%) դպրոցներում:
- *սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողների՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են 12 դպրոցներում, համապատասխան իրավական ակտերի պահանջների խախտումներ են արձանագրվել 1 (8%) դպրոցում:* 2020 և 2019 թվականներին նշված կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ չեն իրականացվել:
- *շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են արդյունքում 12 դպրոցներում:* Ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության

պահանջների խախտումներ չեն արձանագրվել: 2020 և 2019 թվականներին նշված կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ չեն իրականացվել:

- *վճարովի հիմունքներով հանրակրթական և (կամ) մասնագիտական լրացուցիչ ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են 23 դպրոցներում:* Ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են արձանագրվել 1 (4%) դպրոցում: 2020 և 2019 թվականներին նշված կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ չեն իրականացվել:

- *օլիմպիադայի կազմակերպման և անցկացման կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են 14 դպրոցներում:* Ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են արձանագրվել 3 (25%) դպրոցում: 2020 և 2019 թվականներին նշված կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ չեն իրականացվել:

Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներն ըստ հաստատությունների ներկայացվել են եռամսյակային հաշվետվություններում: Վերջին 3 տարիներին իրականացված ստուգումների արդյունքների համեմատական պատկերն ըստ ուսումնական հաստատությունների թվի տոկոսային համամասնության՝ ներկայացված է ստորև բերված դիագրամում (Գծապատկեր N 10).



Ինչպես արտահայտված է N 10 գծապատկերում՝ 2020 թվականի համեմատ դպրոցների թվի տոկոսային համամասնությամբ աճել է *կառավարման խորհրդի ձևավորմանն ու լիազորությունների կատարմանն ուղղված ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ թույլ տված դպրոցների թիվը (առկա է աճման դինամիկա):* Կրթության կազմակերպմանը ուղղված ստուգումների արդյունքում ունենք նվազում 2020 թվականի համեմատ, իսկ Գծապատկեր N10-ում առանձնացված մյուս ուղղություններով առկա է խախտում թույլ տված դպրոցների տոկոսային համամասնության նվազման դինամիկա:

Ստուգումների շրջանակում տրված գրավոր աշխատանքների մասով ունենք հետևյալ պատկերը (Գծապատկեր N 11).



Ինչպես ներկայացված է գծապատկեր N 11-ում՝ 2020 թվականի համեմատ «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքների միջին գնահատականը (10 միավորային սանդղակում) 2021 թվականին աճել:

Նախնական (արհեստագործական) կրթության և միջին մասնագիտական կրթության ոլորտներ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության և միջին մասնագիտական կրթության ոլորտներում կառավարման և կրթական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ԿՏՄ-ն 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրի համաձայն ստուգումներ է իրականացրել 7 ուսումնարաններում և 21 քոլեջներում, և ոչ պլանային 6 ստուգումներ՝ 3 քոլեջներում:

7 ուսումնարաններում իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների 33 խախտումներ, կազմվել է 7 ակտ: Խախտումներից 8-ի հետևանքների վերացման նպատակով ԿՏՄ ղեկավարի կողմից 3 հաստատությունների տնօրեններին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ (մնացած 25 խախտումները ժամկետնանց են և դրանց հետևանքները հնարավոր չէ վերացնել): 8 հանձնարարականներից 6-ը (75%) վերաբերել են կադրային նշանակումներին:

Ստուգումների արդյունքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների 78 խախտումներ են արձանագրվել 21 քոլեջներից 16-ում (24%), կազմվել է 16 ակտ: Խախտումներից 12-ի հետևանքների վերացման նպատակով ԿՏՄ ղեկավարի կողմից 3 հաստատությունների տնօրեններին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ (մնացած 66 խախտումները ժամկետնանց են և դրանց հետևանքները հնարավոր չէ վերացնել): 12 հանձնարարականներից 9-ը (75%) վերաբերել են կադրային նշանակումներին (Գծապատկեր N 12):



Հաստատությունների կողմից մասամբ են կատարվում կադրերի նշանակումների վերաբերյալ հանձնարարականները: Ըստ կատարողականների՝ խախտումով նշանակված անձանց դասաժամեր չեն տրամադրվում, մինչդեռ տեղեկատվություն չի տրամադրվում նրանց փոխարեն նշանակված անձանց վերաբերյալ:

Հանձնարարականների կատարման ժամկետը 2021 թվականին լրացել է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող 3 հաստատությունների դեպքում: 3 հաստատություններին տրված 6 հանձնարարականներից 3-ը (50%) վերաբերել են մասնագիտական առարկաները ոչ մասնագետի կողմից դասավանդելուն 1-ական խախտումներ՝ կառավարման խորհրդի գործունեությանը, առարկայական ծրագրերին, դիպլոմների բաշխման գործընթացին: Ըստ հաստատությունների տնօրեններից ստացված կատարողականների վերաբերյալ գրությունների՝ կադրերի նշանակումներին վերաբերող խախտումները մասամբ են կատարվել, իսկ մնացած 3 խախտումները՝ լիարժեք:

Հանձնարարականների կատարման ժամկետը 2021 թվականին լրացել է միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող 4 հաստատությունների դեպքում: 4 հաստատություններին տրված 8 հանձնարարականներից 4-ը (50%) վերաբերել են մասնագիտական առարկաները ոչ մասնագետի կողմից դասավանդելուն, 2-ը՝ ուսանողների վերականգնման գործընթացին և 1-ական խախտումներ՝ ուսումնական պլանին և կառավարման խորհրդի գործունեությանը:

Ըստ հաստատությունների տնօրեններից ստացված կատարողականների վերաբերյալ գրությունների՝ կադրերի նշանակումներին վերաբերող խախտումների հետևանքների վերացումը մասամբ է կատարվել, իսկ մնացած 4 խախտումների դեպքում՝ լիարժեք:

Հանձնարարականների և կատարողականների համադրման արդյունքներն, ըստ ուսումնական հաստատությունների, ներկայացվել են 2021 թվականի եռամսյակային հաշվետվություններում:

Ստուգումների արդյունքներն համապատասխան առաջարկություններով ուղարկվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարին: Ստուգումների արդյունքներ,ն ըստ հաստատությունների, ներառվել են ԿՏՄ 2021 թվականի եռամսյակային հաշվետվություններում: Ստուգումների արդյունքում ունենք հետևյալ պատկերը.

- *կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման և տնօրենի ընտրության կարգերի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են 4 ուսումնարաններում և 5 քոլեջներում:* Համապատասխան իրավական ակտերի պահանջների խախտումներ են արձանագրվել 3 (75%) ուսումնարաններում և 2 (40%) քոլեջներում: 2020 թվականին կառավարման խորհրդի գործունեության խախտումներ են արձանագրվել 2 (67%) ուսումնարաններում և 6 (40%) քոլեջներում, իսկ 2019 թվականին՝ 9 ուսումնարաններում (75%) և 14 քոլեջներում (82%):
- *տնօրենին ներկայացվող և կրթության կազմակերպման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են 7 ուսումնարաններում և 21 քոլեջներում:* Համապատասխան իրավական ակտերի պահանջների խախտումներ են արձանագրվել 4 (57%) ուսումնարաններում և 6 (29%) քոլեջներում: Տնօրենին և կրթության կազմակերպմանը ներկայացվող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ արձանագրվել են 2020 թվականին ստուգված 3 (100%) ուսումնարաններում և 7 (47%) քոլեջներում, 2019 թվականին ստուգված 11 (92%) ուսումնարաններում և 16 (94%) քոլեջներում:
- *սովորողների ընդունելության կարգերի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են 3 ուսումնարաններում և 7 քոլեջներում*: Համապատասխան իրավական ակտերի պահանջների խախտումներ են արձանագրվել 2 (29%) ուսումնարաններում և 2 (10%) քոլեջներում: Ուսանողների **ընդունելության** գործընթացի խախտումներ են արձանագրվել 2020 թվականին ստուգված 3 (100%) ուսումնարաններում և 10 (56%) քոլեջներում, 2019 թվականին ստուգված 10 (83%) ուսումնարաններում և 13 (76%) քոլեջներում:
- *բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատությունում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են 9 քոլեջներում:* Համապատասխան իրավական ակտերի պահանջների խախտումներ են արձանագրվել 1 (11%) քոլեջում: 2020 և 2019 թվականներին նշված կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ չեն իրականացվել:
- *պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման և շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգերի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են 3 ուսումնարաններում և 16 քոլեջներում:* Համապատասխան իրավական ակտերի պահանջների խախտումներ են արձանագրվել 1 (33%) ուսումնարանում և 12 (75%) քոլեջներում: 2020 և 2019 թվականներին նշված կարգերի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ չեն իրականացվել:
- *ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են 4 ուսումնարանում և 5 քոլեջում:* Արդյունքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են

արձանագրվել 1 (25%) ուսումնարանում և 1 (20%) քոլեջում: 2020 և 2019 թվականներին նշված կարգերի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ չեն իրականացվել:

- *հեռավար, դրսեկությամբ, վարպետային և մեկից ավելի ուսուցման կարգերի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ իրականացվել են 3 ուսումնարանում և 7 քոլեջներում:* Ստուգումների արդյունքում խախտումներ չեն հայտնաբերվել, քանի որ հաստատությունների կողմից հեռավար, դրսեկությամբ, վարպետային և մեկից ավելի ուսուցման գործընթացներ չեն իրականացվում: 2020 և 2019 թվականներին նշված կարգերի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ չեն իրականացվել:

- *սովորողների ակադեմիական արձակուրդում գտնվելու, տեղափոխման և վերականգնման կարգերի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ են իրականացվել 9 քոլեջներում:* Համապատասխան իրավական ակտերի պահանջների խախտումներ են արձանագրվել 4 (44%) քոլեջում: Նշված գործընթացների ստուգման արդյունքում 2020 թվականին խախտումներ են հայտնաբերվել 1 (33%) ուսումնարանում և 9 (60%) քոլեջներում, 2019 թվականին՝ 10 (83%) ուսումնարաններում և 14 (82%) քոլեջներում:

ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ թույլ տված ուսումնարանների և քոլեջների տոկոսային համամասնությունն ըստ 2019-2021 թվականների ստուգումների արդյունքների՝ ներկայացված է ստորև բերված դիագրամում (Գծապատկեր N 13):



Ըստ Գծապատկեր N 13-ի տվյալների՝ ուսումնարանների դեպքում աճել է կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի գործունեությանը վերաբերող խախտումներ թույլ տված հաստատությունների տոկոսային թիվը: Քոլեջների դեպքում առկա է տոկոսային թվերի նվազում՝ բոլոր գործընթացների մասով:

7.6. Վարչական վարույթների քանակը, դրանց հարուցելու հիմքերը

2021 թվականին ԿՏՄ նախաձեռնությամբ իրականացվել է 1 վարչական վարույթ՝ դպրոցի կրթական գործընթացի խաթարման պատճառները և դրանցից բխող հետևանքները պարզելու, հնարավոր խախտումների հայտնաբերման պարագայում վարչական ակտ ընդունելու (գործողություն կատարելու) նպատակով: Վարույթի ընթացքում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ:

Իրականացված վարույթի արդյունքները ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարին և ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարին, ԿԳՄՍ նախարարին:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով, ՀՀ վարչապետի՝ 2018 թվականի հունիսի 11-ի N 729-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կրթության տեսչական մարմնի կանոնադրության 18-րդ կետի 7-րդ ենթակետով տնօրենին տրվել է կատարման համար պարտադիր կարգադրագիր: Սահմանված ժամկետում ներկայացվել է տեղեկատվություն հանձնարարականների վերաբերյալ:

ԿՏՄ նախաձեռնությամբ 2020 թվականին իրականացվել են 38, 2019 թվականին՝ 32 վարչական վարույթներ:

2021 թվականին ԿՏՄ-ում ստացված դիմում-բողոքների հիման վրա իրականացվել է 60 վարչական վարույթ, կարճվել են 14 (23%)-ը:

2020 թվականին ԿՏՄ-ում ստացված դիմում-բողոքների հիման վրա իրականացվել է 60 վարչական վարույթ, կարճվել են՝ 12 (20%)-ը:

2019 թվականին ԿՏՄ-ում ստացված դիմում-բողոքների հիման վրա իրականացվել է 139 վարչական վարույթ, կարճվել են դրանցից 27-ը՝ 19%:

7.7. Տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կրկնվող օրենսդրության խախտումները, ինչպես նաև դրանց պատճառները, տարածվածությունը.

Նախադպրոցական կրթության ոլորտում առավել հաճախ կրկնվող 3 խախտումներն են՝

1. Մանկավարժական աշխատողների հաստիքային միավորների պակաս կամ չհատկացված հաստիքային միավորներ՝ 87 խախտում 40 **(93%)** մանկապարտեզներում, որոնցից 31-ը վերաբերում են ֆիզկուլտուրայի հրահանգչի չտրամադրված հաստիքային միավորներին,
2. Մանկավարժական աշխատողների ընտրություն և նշանակում սահմանված կարգի պահանջների խախտումներով՝ 79 խախտում՝ 29 **(67%)** մանկապարտեզներում,
3. Խմբերի երեխաների խտությունը գերազանցում է սահմանվածը՝ 25 խախտում 13 (30%) մանկապարտեզներում:

Կարևոր է նշել, որ նշված խախտումներից առաջին 2-ը առավել հաճախ կրկնվող խախտումների առաջին եռյակում են եղել թե 2020, թե 2019 թվականներին, իսկ երրորդը՝ 2020 թվականին:

Պակաս կամ չհատկացված հաստիքային միավորներին վերաբերող 36 խախտումներ արձանագրվել են 2020 թվականին ստուգված՝ 17 (85%) մանկապարտեզներում, 66 խախտումներ՝ 2019 թվականին ստուգված 29 (85%) մանկապարտեզներում: Մանկավարժական աշխատողների ընտրությանը և նշանակմանը վերաբերող 33 խախտումներ արձանագրվել են 2020 թվականին ստուգված 12 (60%) մանկապարտեզներում, 35 խախտումներ՝ 2019 թվականին ստուգված 16 (55%) մանկապարտեզներում: Խմբերի երեխաների խտությանը վերաբերող 17 խախտում է արձանագրվել 2020 թվականին ստուգված **17 (50%)** մանկապարտեզներում:

Ներկայացված տեղեկատվության համաձայն՝

- մանկապարտեզների հաստիքային միավորներին վերաբերող խախտումների թիվը 2020 թվականի համեմատ աճել է: Աճել են նաև խախտում թույլ տված մանկապարտեզների բացարձակ և տոկոսային թվերը:

- կադրերի նշանակումներին վերաբերող խախտումների թիվը, խախտում թույլ տված մանկապարտեզների թիվը աճել է 2020 թվականի համեմատ, սակայն տարածվածության իմաստով (տոկոսային համամասնությամբ) առկա է նվազում:

- խմբերում երեխաների խտությանը վերաբերող խախտումները 2020 թվականի համեմատ նվազել են թե քանակապես, թե տարածվածության իմաստով (նվազել է և խախտումների թիվը, և խախտում թույլ տված մանկապարտեզների թիվն ու տոկոսային թիվը):

Հաստիքային միավորների պակաս հատկացումը կախված է համայնքների ֆինանսական միջոցներից (այդ մասին են վկայում համայնքների ղեկավարներից ստացված գրությունները), մանկավարժական աշխատողների ընտրությանը վերաբերող խախտումները՝ համապատասխան մասնագետների բացակայությունից՝ ինչը հանրապետության հատկապես գյուղական համայնքներում մեծագույն խնդիր է: Խմբերում սաների գերբեռնվածությանը վերաբերող խախտումների դեպքում պատճառը թե՛ ֆինանսական միջոցներն են, թե՛ շենքային պայմանները:

Հանրակրթության ոլորտում առավել հաճախ կրկնվող 3 խախտումներն են.

1. Տնօրենը սահմանված կարգով չի իրականացրել մանկավարժական կադրերի ընտրությունը (համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի)՝ 164 (36%) խախտում 36 **(73%)** դպրոցներում.

2. Սովորողների անձնական գործերի բացակայություն՝ 61 խախտում **2(4%)** դպրոցներում.

3. Սովորողների կրթության հաջորդականությանը և շարունակականությանը (սովորողն ընդունվել է սահմանվածից 1 դասարան բարձր կամ ցածր)՝ վերաբերող 42 խախտում 13 (27%) դպրոցներում:

Ինչպես արդեն նշվել է՝ կադրերի նշանակմանը վերաբերող խախտումները հիմնականում և առավելապես փոքր համայնքներում համապատասխան մասնագետների բացակայության պատճառով են, մինչդեռ սովորողների անձնական գործերի բացակայությանը, կրթության հաջորդականությանը վերաբերող խախտումները՝ համապատասխան իրավական ակտերի պահանջների չիմացության (տարընթերցման) պատճառով:

Կարևոր է նշել, որ նախորդ 2 տարիներին ևս մանկավարժական կադրերին (2020թ.՝ 28 (78%) դպրոցում՝ 96 խախտում, 2019թ.՝ 25 (76%) դպրոցում՝ 79 խախտում) և սովորողների ընդունելությանը (2020թ.՝ 20 (56%) դպրոցում՝ 40 խախտում, 2019թ.՝ 19 (58%) դպրոցում՝ 121 խախտում) վերաբերող խախտումները առավել հաճախ կրկնվող խախտումների առաջին եռյակում են եղել:

Մանկավարժական կադրերի նշանակումներին վերաբերող խախտումների դեպքում վերջին 3 տարիների մասով ունենք քանակի աճի դինամիկա, իսկ տարածվածության առումով՝ առկա է խախտում թույլ տված դպրոցների տոկոսային թվի նվազում՝ նախորդ տարվա նկատմամբ: Սովորողների ընդունելությանը վերաբերող խախտումների մասով ունենք քանակական աճ 2020 թվականի համեմատ, իսկ տարածվածության առումով՝ առկա է խախտում թույլ տված դպրոցների տոկոսային թվի նվազման դինամիկա:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության և միջին մասնագիտական կրթության ոլորտներում առավել հաճախ կրկնվում են հետևյալ խախտումները՝

1. Պետական ամփոփիչ ստուգման գործընթացի 19 խախտումներ՝ 6 (21%) հաստատություններում,

2. Դիպլոմների բաշխման հաշվետվությունների անճշտություններին և կադրերի ընտրությանը վերաբերող 17-ական խախտումներ՝ համապատասխանաբար՝ 12 (43%) և 3 (11%) հաստատություններում:

3. Ուսանողական իրավունքի վերականգնման գործընթացի 14 խախտումներ՝ 4 (14%) հաստատություններում:

Կարևոր է նշել, որ կադրերի ընտրությանը և ուսանողական իրավունքի **վերականգնման** գործընթացին վերբերող խախտումները առավել հաճախ կրկնվող խախտումների առաջին եռյակում են եղել թե 2020, թե 2019 թվականներին: Կադրերի ընտրության 11 խախտումներ են արձանագրվել 2020 թվականին ստուգված 8 (44%) հաստատություններում, 54 խախտումներ՝ 2019 թվականին ստուգված 20 (69%) հաստատություններում: Վերականգնման գործընթացի 40 խախտումներ են արձանագրվել 2020 թվականին ստուգված 10 (56%) հաստատություններում, 59 խախտումներ՝ 2019 թվականին ստուգված 21 (72%) հաստատություններում:

Ներկայացված տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականի համեմատ առկա է կադրերի ընտրությանը վերաբերող խախտումների թվի աճ, սակայն ատարածվածության առումով նվազել է թե խախտում թույլ տված հաստատությունների թիվը, թե տոկոսային թիվը: Ուսանողների իրավունքի վերականգնման գործընթացին վերաբերող խախտումների մասով առկա է թե խախտումների թվի, թե տարածվածության առումով նվազման դինամիկա:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում կադրերի նշանակմանը վերաբերող խախտումները պայմանավորված են համապատասխան մասնագետների բացակայությամբ, իսկ պետական ամփոփիչ ստուգման, ուսանողական իրավունքի վերականգնման գործընթացներին վերաբերող խախտումները՝ տնօրենների կողմից ՀՀ օրենսդրության պահանջների ոչ պատշաճ կիրարկման արդյունք:

7.8. Տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցներ.

2021 թվականին ԿՏՄ կողմից իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում լիազոր մարմինների կողմից ուսումնական հաստատությունների տնօրենների (ուսումնական գծով տեղակալի) նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր: Մասնավորապես (Աղյուսակ 6).

Աղյուսակ 6

N	*Ուսումնական հաստատության անվանումը*	*Պաշտոնը*	*Կիրառված կարգապահական տույժը*
1.	*ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի հ. 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ*	*Տնօրեն*	*Նկատողություն*
2.	*ՀՀ Արմավիրի մարզի «Շենիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ*	*Տնօրեն*	*Խիստ նկատողություն*
3.	*ՀՀ Լոռու մարզի «Գոգարանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ*	*Տնօրեն*	*Նկատողություն*

8.ԿՏՄ վերահսկողության ոլորտում ռիսկերի առկա իրավիճակի վերլուծություն

Կրթական գործունեության տեսանկյունից ուսումնական հաստատության ռիսկը կրթության բնագավառը կարգավորող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ սովորողների (երեխաների) կրթական իրավունքի պետական երաշխիքների պահպանմանը, կրթության որակի բարձրացմանը, կրթական ծրագրերի յուրացմանը, պետական կրթական չափորոշիչների պահանջների կատարմանը խոչընդոտող գործոնների ի հայտ գալու հավանականությունն է՝ հաշվի առնելով դրանց բացասական հետևանքները:

Ամփոփելով հաշվետվության 2-րդ, 3-րդ և 7-րդ գլուխներում ներկայացված տվյալները՝ ստորև ներկայացվում են ԿՏՄ 2021 թվականի գործունեության ընթացքում հայտնաբերված ռիսկերին ըստ վերահսկողության ոլորտների:

Նախադպրոցական կրթության ոլորտում հիմնական ռիսկերը, որոնք խոչընդոտ են հանդիսանում երեխաների կրթական իրավունքի պահպանմանը՝ մանկապարտեզներում

- մանկավարժական աշխատողների կամ չհատկացված հաստիքային միավորների պակասն է,
- համապատասխան որակավորում չունեցող մանկավարժական աշխատողների առկայությունը,
- գերբեռնված խմբերի առկայությունը,
- իրենց պաշտոնային պարտականությունները ոչ պատշաճ կատարող մեթոդիստների, մանկավարժական աշխատողների առկայությունը և համայնքապետարանների կողմից մանկապարտեզներին տրամադրվող ֆինանսական միջոցների սակավությունը:

Նախատեսվածից պակաս հատկացված հաստիքային միավորների, համապատասխան որակավորում չունեցող կամ իրենց պաշտոնային պարտականությունները ոչ պատշաճ կատարող մանկավարժական աշխատողների, գերբեռնված խմբերի առկայության պարագայում խաթարվում է կրթական գործընթացի և՛ լիարժեք կազմակերպումը, և՛ իրականացումը, ինչպես նաև չեն ապահովվում նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջները:

2020 թվականի համեմատ 2021 թվականին նախադպրոցական կրթության ոլորտում իրականացված ստուգումների արդյունքում առկա է խախտումների քանակական աճ թե՛ հաստիքային միավորներին, թե՛ կադրերի նշանակումներին վերաբերող խախտումների մասով:

ԿՏՄ 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված մանկապարտեզներից 7-ը ԿՏՄ կողմից ստուգվել էին նաև 2018 թվականին: Համեմատելով ստուգումների ընթացքում կիրառված ստուգաթերթերի հանրագումարային ռիսկային միավորի նկատմամբ ստուգումների արդյունքում ձևավորված ռիսկային միավորների տոկոսային համամասնությունները ստացվել է հետևյալ պատկերը (Գծապատկեր N14)՝



Կորելյացիոն կապ է հաստատվել Գծապատկեր N14-ում ներկայացված տվյալների միջև: Կորելյացիոն բնութագրիչը ստացվել է 0.14, ինչը ցույց է տալիս, որ այս տվյալները միմյանցից անկախ են: Ըստ Գծապատկեր N 14-ի տվյալների՝ 2018 թվականին իրականացված ստուգումների արդյունքում ամենաշատ խախտումներ թույլ տված մանկապարտեզը 2021 թվականին գրանցել է ամենացածր արդյունքը, իսկ ամենաքիչ խախտումներ ունեցող մանկապարտեզի կողմից թույլ տված խախտումները ավելացել են:

Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտում հիմնական ռիսկերը, որոնք խոչընդոտ են հանդիսանում սովորողների կրթական իրավունքի պահպանմանը, կրթության որակի բարձրացմանը, կրթական ծրագրերի յուրացմանը՝ դպրոցներում

- համապատասխան որակավորում չունեցող մանկավարժական աշխատողների,
- իրենց պաշտոնային պարտականությունները ոչ պատշաճ կատարող տնօրենների, տնօրենների տեղակալների, ուսուցիչների առկայությունն է:

Համապատասխան որակավորում չունեցող մանկավարժական աշխատողների, իրենց պաշտոնային պարտականությունները ոչ պատշաճ կատարող տնօրենների, ուսուցիչների, սահմանվածից մեկ դասարան բարձր կամ ցածր դասարան ընդունված սովորողների դեպքում խախտվում են սովորողների կրթական իրավունքները, չեն կատարվում հանրակրթության պետական կրթական չափորոշչի պահանջները, իջնում է կրթության որակը, նվազում է սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման մակարդակը:

2020 թվականի համեմատ 2021 թվականին հանրակրթության ոլորտում իրականացված ստուգումների արդյունքում թե՛ մանկավարժական կադրերի նշանակումներին, թե՛ սովորողների ընդունելությանը վերաբերող խախտումների քանակը աճել է:

ԿՏՄ 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված դպրոցներից 10-ը ԿՏՄ կողմից ստուգվել էին նաև 2018 թվականին: Համեմատելով ստուգումների ընթացքում կիրառված ստուգաթերթերի հանրագումարային ռիսկային միավորի նկատմամբ ստուգումների արդյունքում ձևավորված ռիսկային միավորների տոկոսային համամասնությունները ստացվել է հետևյալ պատկերը (Գծապատկեր N15)՝



Գծապատկեր N 15-ում ներկայացված տվյալների կորելյացիոն բնութագրիչը ստացվել է - 0,6: Այսինքն՝ որ դպրոցում 2018 թվականին բարձր է խախտումների տոկոսային համամասնությունը՝ 2021 թվականին առկա է նվազում, և հակառակը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության և միջին մասնագիտական կրթության ոլորտներում առկա հիմնական ռիսկերը՝ հաստատություններում

- համապատասխան որակավորում չունեցող մանկավարժական աշխատողների,
- իրենց պաշտոնային պարտականությունները ոչ պատշաճ կատարող տնօրենների առկայությունն է:

Համապատասխան մասնագիտական որակավորում չունեցող մանկավարժական աշխատողների, իրենց պաշտոնային պարտականությունները ոչ պատշաճ կատարող տնօրենների դեպքում հաստատություններում սահմանված կարգի խախտումներով են ընթանում պետական ամփոփիչ ստուգման, սովորողների ընդունելության, տեղափոխման, ուսանողականան իրավունքի վերականգնման և այլ գործընթացներ: Թվարկված գործընթացները չեն կարող չազդել ուսանողների կողմից կրթական ծրագրերի յուրացման և կրթության որակի վրա:

Միաժամանակ կարևոր է նշել, որ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության և միջին մասնագիտական կրթության ոլորտներում նշված ռիսկերը ունեն նվազման դինամիկա: Վերջին 3 տարիների ստուգումների արդյուքների համեմատական պատկերը (տես՝ Գծապատկեր) ցույց է տալիս, որ ստուգումների արդյունքում նշված գործընթացներին վերաբերող խախտումները նվազել են:

ԿՏՄ 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության և միջին մասնագիտական կրթության ոլորտների հաստատություններից 15-ը ԿՏՄ կողմից ստուգվել են նաև 2018 թվականին: Համեմատելով ստուգումների ընթացքում կիրառված ստուգաթերթերի հանրագումարային ռիսկային միավորի նկատմամբ ստուգումների արդյունքում ձևավորված ռիսկային միավորների տոկոսային համամասնությունները ստացվել է հետևյալ պատկերը (Գծապատկեր N 16)՝



Գծապատկեր N 16-ում ներկայացված տվյալների կորելյացիոն բնութագրիչը ստացվել է 0,3: Այս դեպքում ևս տվյալները միմյանց հետ կապ չունեն: 2018 թվականին մեծ թվով խախտումներ թույլ տված հաստատությունը 2021 թվականին ունեցել է ավելի քիչ խախտումներ, քան համեմատաբար ավելի փոքր թվով խախտումներ ունեցող հաստատությունը: Գծապատկեր N 16-ի տվյալների համաձայն կարող ենք նշել, որ այդ հաստատություններում առկա ռիսկերը 2018 թվականի համեմատ նվազել են:

Նկարագրված իրավիճակով պայմանավորված՝ ԿՏՄ-ն 2022 թվականի գործունեության ծրագրի նպատակ է սահմանվել ԿՏՄ վերահսկողության ոլորտներում առավել որակյալ, մատչելի և արդիական կրթության պահովմանը նպաստելը:

Խնդիրներն ըստ ոլորտների սահմանվել են այսպես.

➢ հանրակրթության ոլորտում՝ կրթական գործընթացի արդյունավետության ապահովում, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում ուսուցման գործընթացում, ներառական կրթական միջավայրի առկայություն,

➢ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում՝ կրթական գործընթացի կառավարման և կազմակերպման արդյունավետության ապահովում, շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների համապատասխանություն ժամանակակից պահանջներին, ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպում, ներառական կրթական միջավայրի առկայություն:

Համաձայն 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրի ԿՏՄ-ն ստուգումներ է իրականացնելու ՀՀ 130 ուսումնական հաստատություններում:

9. Օրենսդրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին առաջարկները (բովանդակությունը, նպատակը)

ԿՏՄ կողմից ՀՀ կառավարությանը և քաղաքականություն մշակող պետական մարմիններին (վերջիններիս առաջարկով, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ) ներկայացվել են օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ: Այսպես.

- ***ԿՏՄ կողմից ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի վերաբերյալ***

ԿՏՄ կողմից լրամշակվել և հաստատման են ներկայացվել՝

➢ ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի N1139-Ն որոշմամբ հաստատված՝ ԿՏՄ կողմից նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններում անցկացվող ստուգումների ստուգաթերթերը: Ստուգաթերթերը հաստատվել են ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 10-ի N948-Ն որոշմամբ:

➢ ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N1153-Ն որոշմամբ հաստատված ԿՏՄ՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը: Այն հաստատվել է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 25-ի N1947-Ն որոշմամբ:

➢ Կազմվել, հաստատվել և հրապարակվել է ԿՏՄ 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը:

- ***ՀՀ վարչապետի աշխատակազմ***

➢ ««Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և ««Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ:

- ***ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ***

➢ ըստ համապատասխան ձևաչափի՝ առաջարկություններ են ներկայացվել ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած՝ ՀՀ կառավարության ծրագրից բխող հնգամյա միջոցառումների ծրագրի նախագծի նախապատրաստման նպատակով:

➢ դիրքորոշում է ներկայացվել «Կրթության պետական վերահսկողության մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ:

➢ ՀՀ վարչապետի աշխատակազմի Բաց կառավարման գործընկերություն (ԲԿԳ) – Հայաստան քարտուղարության կողմից մեկնարկած ԲԿԳ 5-րդ գործողությունների ծրագրի մասին ԲԿԳ քարտուղարության սահմանած առաջարկների վերաբերյալ՝ համաձայն ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի և ԲԿԳ գլոբալ քաղաքական ուղղությունների:

- ***ՀՀ էկոնոմիկայի նախարարություն***

➢ ՀՀ պաշտոնների և զբաղմունքների միասնական դասակարգչի նախագծի,

- ***ՀՀ ԿԳՄՍ նախարարություն***

➢ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի,

➢ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով և «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 9.1–ին հոդվածի 3-րդ պարբերության ա) կետով սահմանված պահանջների մեջ առկա հակասության,

➢ ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին» N 1391-Ն որոշմամբ հաստատված N 4 Հավելվածի VII գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետի,

➢ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի № 1745-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման,

➢ ՀՀ ԿԳ նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի օգոստոսի 2-ի N 1262-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 396-Ն հրամանով հաստատված հավելվածի՝ 7-րդ, 16-րդ և 17-րդ ենթակետերի,

➢ ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի և ուսումնական հաստատությունների պետական միասնական վարչական ռեգիստրի վարման կարգը սահմանելու մասին» հրամանի,

➢ ՀՀ ԿԳՄՍ նախարարի «ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում առարկայական չափորոշիչներ և ծրագրեր փորձարկող 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների 2021-2022 ուսումնական տարվա ուսումնական պլանը հաստատելու մասին» հրամանի,

➢ ՀՀ ԿԳՄՍ նախարարի «ՀՀ ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու կարգը հաստատելու մասին» հրամանի,

➢ ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 և

2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» հրամանի,

- ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» հրամանի,
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի փետրվարի 24-ի N 124-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» հրամանի,
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի մայիսի 3-ի N 388-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» հրամանի,
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 396-ն հրամանում լրացումներ կատարելու մասին» հրամանի,
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 6-ի N 974-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» հրամանի,
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների ղեկավարման իրավունքի (հավաստագրման) համար վերապատրաստման և հավաստագրման կարգը հաստատելու մասին» հրամանի,
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական չափորոշչին դասագրքերի համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը սահմանելու մասին» հրամանի,
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» և «Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշները հաստատելու մասին» հրամանների նախագծերի,
- ՀՀ ԿԳ նախարարի 2012թ. ապրիլի 5-ի N 254-Ն հրամանով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգում» Ազգային բանակից զորացրված ուսանողների հրամանագրման կարգավորում սահմանելու,
- միջին մասնագիտական կրթության 3-73.20.01 «Շուկայաբանություն» մասնագիտության պետական կրթական չափորոշչով նախատեսված 3-73.20.01.01-4 «Շուկայաբան» որակավորման (ՀՀ կրթության և գիտության նախարարի N 413-Ն հրաման)՝ ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի N 73-Ն որոշմամբ հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկի»

պահանջներին՝ 0414.01.5 «Շուկայաբանություն» մասնագիտության 0414.01.01.5 «Մարկետոլոգ» մասնագիտության որակավորման դասիչին և անվանը անհամապատասխանության,

- ՀՀ ԿԳ նախարարի 2017 թվականի մայիսի 31-ի № 637-Ա/2 հրամանով տրված լիցենզիայի № 001 ներդիրում 1041.01.5 «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում /ըստ տրանսպորտի տեսակների/» և 0811.07.5 «Անասնաբուժություն» մասնագիտությունների որակավորումների և ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի № 73-Ն որոշումով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկի» պահանջների անահամապատասխանության,
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թվականի հունիսի 7-ի թիվ 40-Ա/2 հրամանով տրված՝ 0721.11.5 «Ծխախոտի աճեցման և վերամշակման տեխնոլոգիա» մասնագիտության 0721.11.01.5 «Տեխնոլոգ՝ ծխախոտի աճեցման և վերամշակման» որակավորմամբ գործունեության թույլտվության և ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի № 73-Ն որոշումով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկի» պահանջով նախատեսված՝ 0721.11.01.5 «Տեխնոլոգ՝ մանկական և ֆունկցիոնալ սննդի արտադրության» որակավորման անհամապատասխանության,
- ՀՀ ԿԳ նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 17-ի № 1305-Ա/2 հրամանով տրված լիցենզիայի № 001 ներդիրում 0215.06.5 «Գործիքային կատարողական արվեստ (ըստ ճյուղերի)» մասնագիտության անվանման, ուսուցման տևողության և կրթության հիմքի և ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի № 73-Ն որոշումով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկի» պահանջների անահամապատասխանությունների վերաբերյալ:

10. ԿՏՄ-ի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի դեմ բերված բողոքների քանակը, բովանդակությունը և դրանց վերաբերյալ ընդունված որոշումները, տեղեկատվություն դատարանների կողմից վարույթ ընդունված գործերի մասին

2021 թվականի ընթացքում ԿՏՄ-ի աշխատակիցների դեմ բերվել է 1 դիմում-բողոք, որը կարճվել է՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը:

ՌԳՍՊՎԳ վարչություն